



## Մամլո հաղորդագրություն



EUROEAST  
CULTURE

Eastern Partnership Culture Programme



**Միջազգային հրատարակիչների այցելություններ  
և**

**Աշխատանքային հանդիպում Երևանում՝**

**«Գրականության առաջխաղացումը թարգմանության միջոցով» խորագրով**

**Փետրվարի 18-22, 2014, Երևան**

**Միջոցառումները կազմակերպված են Գրքի հարթակ ծրագրի շրջանակներում  
Արևելյան գործընկերության մշակութային ծրագրի աջակցությամբ  
Կազմակերպիչներ՝ Հայ գրականության հիմնադրամ և Next Page հիմնադրամ (Բուլղարիա)**

**Միջազգային հրատարակիչների այցելությունները** տեղի կունենան փետրվարի 18-20-ը, Երևանում և կհյուրընկալեն մի խումբ միջազգային հրատարակիչների և գրքի ոլորտի մասնագետների: Այցելությունների ընթացքում հյուրընկալված մասնագետները կծանոթանան Հայաստանյան գրքի շուկային, հաստատելով կամ ընդլայնելով համագործակցության եզրերը թարգմանության իրավունքների փոխանակման ոլորտում: Մասնակիցների թվում կլինեն նաև մի քանի Եվրոպական հրատարակչությունների ներկայացուցիչներ, որոնց ուշադրության կենտրոնում է տարածաշրջանը և թարգմանչական գրականությունը:

**«Գրականության առաջխաղացումը թարգմանության միջոցով» խորագրով միջազգային աշխատանքային հանդիպման** նպատակն է Հայաստանի և Վրաստանի գրքի ոլորտի մասնագետների հետ համատեղ մշակել տարբեր գործիքներ և մոտեցումներ, որոնք կնպաստեն այսպես կոչված՝ «փոքր լեզուներով» ստեղծվող գրականության առաջխաղացմանը թարգմանության միջոցով: Աշխատանքային հանդիպումներին կմասնակցեն ոլորտի հիմնական դերակատարները, այդ թվում՝ հեղինակներ, թարգմանիչներ, հրատարակիչներ, գրական գործակալներ, պետական կառույցներ, հասարակական կազմակերպություններ, մշակութային ՋԼՄ-ներ: Ակնառու մասնագետներ Հայաստանից, Բուլղարիայից, Վրաստանից, Գերմանիայից, Նիդեռլանդներից, Շվեդիայից, Լեհաստանից, Մեծ Բրիտանիայից և Ուկրաինայից:

Մասնակիցներ՝ 50-ից ավելի գրողներ, թարգմանիչներ, հրատարակիչներ, գրական գործակալներ, պետական կառույցների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ, մշակութային ՋԼՄ-ներ Հայաստանից, Վրաստանից, Բուլղարիայից, Գերմանիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Նիդեռլանդներից, Շվեդիայից, Լեհաստանից, Թուրքիայից և Ուկրաինայից:

Աշխատանքային լեզուներ՝ անգլերեն և ռուսերեն

Աշխատանքային հանդիպման վայրը՝ Թուֆենկյան ավանդական Երևան հյուրանոց (Հանրապետության 48, Երևան)

Հաջորդիվ

**Խմբագրիների այցելության և աշխատանաքային հանդիպման մասնակցությունը միայն գրացված մասնակիցների համար:**

**ԳՐՔԻ ՀԱՐԹԱԿ** նախագիծը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից և իրականացվում է Արևելյան գործընկերության մշակութային ծրագրի շրջանակում տարածաշրջանի կայուն զարգացման գործում մշակույթի դերակատարման, ինչպես նաև Եվրոպական Միության Արևելյան Գործընկերության տարածաշրջանային պետական հաստատությունների, քաղաքացիական հասարակության, մշակութային և ակադեմիական կազմակերպությունների համագործակցության խթանման աջակցությամբ:

Միջոցառման կազմակերպմանը աջակցություն է ցուցաբերել նաև [Goethe Institut – Tbilisi](#) կազմակերպությունը:

Մանրամասն տեղեկությունների համար՝ <http://bookplatform.org/en/activities/518-editorial-visits-armenia.html>,  
<http://bookplatform.org/en/activities/37-promotion-literature-in-translation-training-armenia.html>

կամ կապ հաստատել Գրքի Հարթակ նախագծի հայաստանյան ծրագրի ղեկավար Արևիկ Աշխարոյանի հետ

Հայ գրականության հիմնադրամ

ՀՀ, Երևան, Մ. Մաշտոցի պ., 50ա/1

Հեռախոս. (374-77) 35 11 12

#### **Փաստաթղթի վերջը**



Հայաստանի ԵՄ Պատվիրակություն

Հեռախոս. +374 (10) 54 64 94 Ֆաքս. +374 (10) 54 64 95  
E-mail: [Delegation-Armenia@eeas.europa.eu](mailto:Delegation-Armenia@eeas.europa.eu)

#### **Եվրոպական Հանձնաժողովը Եվրոպական Միության գործադիր մարմինն է**

Եվրոպական Միությունը բաղկացած է 28 Անդամ Պետություններից, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել միասին իրենց փորձը, ռեսուրսները և ճակատագրերը: Համատեղ, 50 տարիների զարգացման ընթացքում, նրանք ստեղծել են կայունության, ժողովրդավարության և ամուր զարգացման գոտի՝ միաժամանակ պահպանելով մշակութային առանձնահատկությունները, հանդուրժողականությունը և անհատական ազատությունը: Եվրոպական Միությունը ձգտում է փոխանցել իր ձեռքբերումները և արժեքները իր սահմաններից դուրս գտնվող երկրներին և մարդկանց: